ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

| | | | |
|---|---|---|---|
| *Համարը* | N 1825-Ն | *Տեսակը* | Հիմնական |
| *Տիպը* | Որոշում | *Կարգավիճակը* | Գործում է |
| *Սկզբնաղբյուրը* | Միասնական կայք 2022.11.28-2022.12.11 Պաշտոնական հրապարակման օրը 01.12.2022 | *Ընդունման վայրը* | Երևան |
| *Ընդունող մարմինը* | ՀՀ կառավարություն | *Ընդունման ամսաթիվը* | 01.12.2022 |
| *Ստորագրող մարմինը* | ՀՀ վարչապետ | *Ստորագրման ամսաթիվը* | 01.12.2022 |
| *Վավերացնող մարմինը* | | *Վավերացման ամսաթիվը* | |
| *Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* | 01.01.2023 | *Ուժը կորցնելու ամսաթիվը* | |

**Ծանուցում**

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից և գործում է մինչև 2023 թվականի հուլիսի 1-ը։

**Կապեր այլ փաստաթղթերի հետ**

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ-ԻՑ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՀՀ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՐԳԵԼՎԱԾ ՍՆԴԻԿԻ ՀԱՎԵԼԻՉՈՎ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 դեկտեմբերի 2022 թվականի N 1825-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՐԳԵԼՎԱԾ ՍՆԴԻԿԻ ՀԱՎԵԼԻՉՈՎ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Սնդիկի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և համաձայն «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-5-րդ կետերի, 47-րդ հոդվածի, 7-րդ հավելվածի 50-րդ և 51-րդ կետերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել սնդիկի հավելիչով արտադրանքի ցանկը, որոնց արտահանումը Հայաստանի Հանրապետությունից և ներմուծումը Հայաստանի Հանրապետություն արգելվում է վեց ամիս ժամկետով՝ համաձայն հավելվածի։

2. Սույն որոշման 1-ին կետով սահմանված արգելքը տարածվում է նաև սնդիկի հավելիչով արտադրանքի՝ Հայաստանի Հանրապետությունից Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների տարածք և Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների տարածքից Հայաստանի Հանրապետություն ներքին փոխադրման վրա։

3. Սույն որոշման 1-ին կետով սահմանված արգելքը չի տարածվում՝

1) սույն որոշման հավելվածի աղյուսակի 3-րդ և 4-րդ կետերում նշված արտադրանքի վրա, որոնք ուղեկցվում են «Էլեկտրատեխնիկայի և ռադիոէլեկտրոնիկայի արտադրատեսակներում վտանգավոր նյութերի կիրառումը սահմանափակելու մասին» Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի (ԵԱՏՄ ՏԿ 037/2016) պահանջներին համապատասխանության գնահատման (հավաստման) վերաբերյալ փաստաթղթով (արտադրանքի համապատասխանության հայտարարագիր կամ համապատասխանության սերտիֆիկատ).

2) սույն որոշման հավելվածի աղյուսակի 5-րդ և 6-րդ կետերում նշված արտադրանքի վրա, որոնք ուղեկցվում են «Օծանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 009/2011) պահանջներին համապատասխանության գնահատման (հավաստման) վերաբերյալ փաստաթղթով (արտադրանքի համապատասխանության հայտարարագիր, իսկ մանկական կոսմետիկայի և նանոնյութերի օգտագործմամբ արտադրված օծանելիքակոսմետիկական արտադրանքի համար՝ արտադրանքի պետական գրանցման վկայական).

3) սնդիկի հավելիչով այն արտադրանքի վրա, որոնց մաքսային հայտարարագրման ժամանակ առկա է ներմուծողի

կամ արտահանողի կողմից կազմված և հաստատված գրավոր հայտարարագիրը՝ քաղաքացիական պաշտպանության, ռազմական, հետազոտությունների, սարքերի չափաբերման և որպես չափանմուշ օգտագործման նպատակով արտադրանքի անհրաժեշտության վերաբերյալ:

4. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռօրյա ժամկետում ծանուցել Եվրասիական տնտեսական հանձնաժողովին սույն որոշման 1-ին կետով սահմանված արտադրանքի արտահանման և ներմուծման ժամանակավոր արգելքի մասին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից և գործում է մինչև 2023 թվականի հուլիսի 1-ը:

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետ** **Ն. Փաշինյան**

Երևան

01.12.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

**Հավելված**
**ՀՀ կառավարության 2022 թվականի**
**դեկտեմբերի 1-ի N 1825-Ն որոշման**

**Ց Ա Ն Կ**

ՍՆԴԻԿԻ ՀԱՎԵԼԻՉՈՎ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ, ՈՐՈՆՑ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԳԵԼՎԱԾ Է

| NN ը/կ | Արտադրանքի անվանումը | Ծածկագիրն ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի |
|---|---|---|
| 1. | Առաջնային տարրեր և առաջնային մարտկոցներ՝ սնդիկ-օքսիդային | 8506 30 000 0 |
| 2. | Սնդիկային լամպեր | 8539 32 200 1 |
| 3. | Լյումինեսցենտային լամպեր | 8539 31 100 0-ից<br>8539 31 900 0-ից |
| 4. | Բարձր ճնշման նատրիումային լամպեր | 8539 32 200 9-ից |
| 5. | Կոսմետիկական, դիմահարդարման կամ մաշկի խնամքի միջոցներ (բացի դեղամիջոցներից) | 3304 10 000 0-ից<br>3304 20 000 0-ից<br>3304 30 000 0-ից<br>3304 91 000 0-ից<br>3304 99 000 0-ից |

| | | |
|---|---|---|
| 6. | Օճառ, որպես օճառ օգտագործվող մակերևութային ակտիվ օրգանական նյութեր և միջոցներ | 3401 11 000 1-ից<br>3401 11 000 9-ից<br>3401 19 000 0-ից<br>3401 20 100 0-ից<br>3401 20 900 0-ից<br>3401 30 000 0-ից |
| 7. | Սնդիկ պարունակող մարտկոցներ, բացառությամբ արծաթացինկային և օդացինկային կոճակային մարտկոցների, որոնցում սնդիկի առավելագույն պարունակությունը 2 տոկոսից քիչ է | 8506-ից |
| 8. | Սնդիկ պարունակող անջատիչներ և ռելեներ, բացառությամբ բարձր ճշտության կոնդենսատորային կամրջակների և կորստի չափման կամրջակների և բարձր ռադիոհաճախականության անջատիչների և հսկիչ սարքերի ու կարգավորիչների ռելեների, որոնցում սնդիկի առավելագույն պարունակությունը 20 մգ է մեկ կամրջակի, անջատիչի կամ ռելեի հաշվով | 8536-ից |
| 9. | Սնդիկ պարունակող պեստիցիդներ, բիոցիդներ և տեղային հակասեպտիկներ | 3808-ից |
| 10. | Սնդիկ պարունակող ոչ էլեկտրոնային չափիչ սարքավորումներ՝<br>- բարոմետրեր<br>- հիգրոմետրեր<br>- մանոմետրեր<br>- ջերմաչափեր<br>- սֆիգմոմանոմետրեր | 9025 80 200 0-ից<br>9025 80 800 0-ից<br>9026 20 800 0-ից<br>9026 20 400 0-ից<br>9025 11-ից<br>9018 90 100 0-ից |

1. Սույն ցանկում ներառված ապրանքների (արտադրանքի) անվանման և ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրի միջև անհամապատասխանությունների դեպքում ծածկագրերը կրում են կողմնորոշիչ բնույթ, և անհրաժեշտ է առաջնորդվել ապրանքների անվանումներով:

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետի աշխատակազմի**
**ղեկավար**

**Ա. Հարությունյան**

01.12.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

**Պաշտոնական հրապարակման օրը՝ 1 դեկտեմբերի 2022 թվական:**